


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ
Տարեկան . . 12 Ժր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Երկու թիւ մէկ ծառայ
Տարեկան . . 14 Ժր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50 "
ԿԱՆԻՍԻԿ

Ծրանշման տղը
20 անդիլ



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄՆՆ ԶՈՐԵՓՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՏԻ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА

Գրութիւնք եւ
լեւ տրուիր

ՇՆՈՐՀԱՍՈՒԹ

Ահաւոր Տարեկանին, Նոր Տարեկանին և Ս. Նշաններն առթիւ հետզհետէ հասնող շնորհաւորական եւ բարեմակութեան քարտերու ու հետապիտեւրու ի պատասխան հրապարակաւ կուգամ շնորհակալիքս յայտնել, եւ փոխադարձաբար շնորհաւորել յոյժ մեր բարեկամները ու համակիցները:

Յ. Գոռլպէրսոն

ՈՐՈՍԱԿԱՆ ԶԵՂԱՐԵՐԱԿԱՆՆԵՐ

— 3 —

Գ Ա Ղ Տ Ն Ի

Գրասենեակ
Կովկասի արտաքին գործոց
Տնօրէնին
Թ. 480
4 ապրիլ 1903
Թիֆլիս

Կարսի նահանգին գլխաւոր
ուղղական Գլխաւոր
Հրամանատարին

Ասիական թուրքիայ քաղաքական գործերու գրասենեակը հասած տեղեկութիւններուն համեմատ, տաճկահայտապահ Հայերը, հայ յեղափոխական Մանախան-բեկը գործակալներէն միեւն, ապստամբութեան կը պատրաստուին: Այս վերջիններուն նպատակն է մեր անդրկովկասեան Հայերուն օգնութեամբը միշտ թուրքերը ծայրայեղ միջոցներու, եւ այսպիսով Հայերուն վրայ հրաւիրել ուշադրութիւնը Եւրոպայի, որ կը պնդէ եւրոպական նահանգաց մէջ բարենորոգումներու գործադրութեանը և կը մոռնայ որ նոյնպիսի բարենորոգումներ խոտացուած էին Սուլթանին կողմէն նաեւ Ասիական նահանգներուն:

Տաճկական իշխանութիւնները պէտք եղած զանազան միջոցները ձեռք կառնուն իրենց հայ հպատակաց գէմ և կաշխատին կատարելապէս բաժանել այս վերջինները մեր հայ հպատակներէն, որ խիստ գոյքօն մասնակցութիւն մը ունեցած ըլլալ կը թուին ապստամբութիւնը պատրաստելու մէջ: ասկէ զատ թուրքերը կը մտածեն որ Անգլիոյ

կատեան Հայերու կողմէն ամեն միջոցներ ձեռք առնուած են:

Ուրիշ տեղեկութեանց հայելով, օսմանեան կառավարութիւնը ստոյգ ապացոյցներ ունի եղեր ի ձեռքին թէ ասիական նահանգներու Հայերը կառավարութեան գէմ ապստամբութեան կը պատրաստուին, անհոգ հազորդակցութեան մէջ ըլլալով Կովկասի հայ յեղափոխականաց հետ: Կենթագրուի, որ խռովարար շարժումները պիտի սկսին գարնան սկիզբը, անմիջապէս որ Կովկասէն Տաճկաստան տանող ճամբաները բացուին:

Թուրքերու տեղեկութեանց համեմատ, գլխաւոր կէտերը, ուրկէ անդրկովկասեան Հայերը պիտի ասպատակեն գէպի թուրքիա, են Կակիրուան և Օլթի:

Ձեր վսեմութեան կը գրենք այս ամէնուն մասին, որպէսզի անոնց ծանօթանաք, և իմացունէք որոյ ուր անկ է:

(Ստորագրութիւն)

Ձեր ուղղական
Գլխաւոր հրամանատար
Կարսի նահանգին

Գրաստանական բաժին

Թ. 143
13 ապրիլ 1903
Կարս

Խիստ կարեւոր

Բոլորովին գաղտնի

Կարսի չըմանակի ոստիկանապետին

Կարսի ոստիկանապետը, իր 11 ապրիլ ամսաթիւ և թ. 67 զեկուցումով մեզ կը հաղորդէ որ, իր գործակալներէն հասած տեղեկութեանց համեմատ, փախըտական Հայերուն մէջ շարժում մը կայ, պատրաստուելու, առաջին ամիս, թուրքիա անցնելու Պարսկաստանէն, ուր, ստացուած տեղեկութեանց համեմատ, գաղտնի Մանախան-բեկը անոնց ղէնք, գնդակ, զգեստ և միջոցներ իսկ գրամ պիտի յանձնէ: Մտադիր են սահմանն անցնել Սուրմալու նահանգէն: Կարսի շրջանակի Բաշ-Խոյս բերար, Հաշ-բատի բերար, Ար-Բատի բերար, Կը-

ղը-Խիւրիկ-տէրէ, Պարսլուան, Խորաշ և Խաս-Ձիթիք գիւղերուն մէջ, և Կակիրուանի շրջանակի թիքար, Կըղը-քէօր և Պաշ-քիլիսէ գիւղերուն տուններուն և գոմերուն մէջ պահեստադրի հայ զինուորները զինավարժութիւն կը սորվեցունեն վեցական հոգիէ բաղկացեալ խմբիկներու, և այս ի շնորհ այն գրամական նպատակի, զոր կ'ստանան Մանախան-բեկէ մը: Ասկէ զատ հանգանակութիւններ կ'ըլլան հայաբնակ ամեն գիւղերու մէջ ընդհանրապէս ծանր, տառնուհիւ հոգիէ բաղկացեալ խումբեր գիշերանց գիւղէ գիւղ կը տեղափոխուին:

Նկատելով որ վերոյիշեալ տեղեկութիւններէն մէկ քանին հաստատուած են նաեւ ձեր, ապրիլ 11 ամսաթիւ թ. 167 զեկուցումովը, ի մասին Հայերուն մէջ գիտուած շարժումին, ինչպէս նաեւ ձեր շրջանակի գրեթէ ամեն գիւղերուն մէջ տեղի ունեցած հանգանակութեանց, հետեւեալն ապրիլ 2 և 5 ին 120 և 123 թիւերով ձեզ տուած, ինչպէս նաեւ անձամբ ձեզ հաղորդած տեղեկութիւններէն զատ, ձեզ կը յանձնարարեմ հետեւեալը:

1.— Հայաբնակ գիւղերու մէջ ոստիկաններ հաստատել, Հայերուն գործողութիւնները լրտեսելու համար և թոյլ չտալու որ խումբեր զինեն, գրամ հաւաքեն, և ընդհանրապէս բարեկարգութիւնը ու խաղաղութիւնը խանգարեն: և եթէ, մարդու պակասութեան պատճառաւ, կարելի չըլլայ բաւականաչափ ոստիկաններ ունենալ, այդ պարագային մէջ կընաք յաճախակի և ըստ կարելոյն շարունակական գիշերապահներ հաստատել հայ գիւղերու մէջ, ինչպէս նաեւ վրդովեալ և կասկածելի գիւղերու մէջ:

2.— Մանրամասն ուշադրութիւն դարձունել մանրամասն կերպով պարզելու Պարսլու գիւղացի կերակրող Պետրոսովին ըրած յայտարարութիւնը, թէ Աւետիս Սարգիսովը հանգանա-

կութիւններ կընէ Բէնտի—Սաթիլի գիւղին մէջ, և Միսաք Մասուրով ու Նահապետ Արուսթով անձերն ալ Պարսլու գիւղին մէջ: պէտքէ հասկնալ թէ որո՞ւ յանձնուած են հաւաքուած գրամները, և այս մասին ստացուած տեղեկութիւնները հաղորդել ընդհանուր գաղտնազին և ոստիկանութեան վերատեսչութեան:

3) Երբ վերադառնամ գէպի կիկիրուան ընելիք պաշտօնական պտույտէս, պիտի առաջարկեմ ձեզ որ անյապաղ և անձամբ երթաք հայաբնակ գիւղերը իրաց ընթացքին վերահասու լինելու և ըստ պարագայից կարգադրութիւններ ձեռք առնելու համար, որպէս զի ներկայ կացութեան անհրաժեշտ միջոցներ լաւագոյն ևս և աւելի իրական կերպիւ կազմաւորուին:

4) Պէտք եղածը կարգադրէք որպէսզի ապրիլ 19 ին առաւօտեան ժամը 10 ին, ինձ ներկայանան Կարսի մէջ, Մացրա, Չաիւ, Բէնտի—Սաթիլի, Պարսլու, Բէկլի Ահմետ, Թօլհանտլի, Բերնա և Ջիւսալի գիւղերուն պետերուն օգնականները:

Ձեզ պիտի զրկուի ընդհուպ առաջին գումար մը հայկական շարժումին առթած ծախուց համար, իր գործակալներուն ամսական: մեր միջոցները առայժմ տահմանափակ ըլլալուն համար, ձեզ կը յատկացնեմ 100 ռուպլի:

Բանակի Համարակալ

Սամայլով, Գրասենեակի պետ

Պօլշկի

Պետ

Կարսի շրջանակին

Թ. 173

13 ապրիլ 1903

Կարս

Խիստ կարեւոր

Գաղտնի

Երեւանի նահանգի ոստիկանաց վարչութեան կառավարչի օգնականին

Իմ շրջանակի մէկ քանի հայաբնակ գիւղերու մէջ, ստացած տեղեկութիւններուն համեմատ, Հայ հին գաղթականներուն մէջ

ապօրէն հանգանակութիւններ տեղի կունենան, օգնելու նպատակաւ հայ խռովարարներուն, որ մտադիր են տասնէն միւնչեւ տասնըհինգական անձերէ բաղկացեալ խումբերով, մայիս ամսուան մէջ, մեր սահմանադրութիւններէն տաճկական հոգն անցնելու և հոն խռովութիւններ յարուցանել, ինչ հասած ստոյգ տեղեկութեանց համեմատ, դադարեալ Աւետիս Սարգիսով հանգանակութիւններ կրնէ Ձարաւշատի, Բենիտի-Սաթիւմի զիւղին մէջ, ինչպէս նաև Ալէքսանդրապօլսեցի Միսաք Ծատուրով և Նահապետ Արութովը՝ Բարաքետ զիւղին մէջ:

Այս ամէնը ձեր վսեմութեան կը հաղորդեմ զարժանն ի գործ դնելու համար:

Ստորագր. Բիսեւով

Կարսի շրջանակին պետը միևնոյն ժամանակ թ. 173, 180, 181, 182, 183, մասնաւոր նամակներով կը գրէ ճարաքիտի, Սօլանլուի Ակբաբի և Կարսի օգնականներուն անոնց առաջարկելով միևնոյն գործի մասին միջոցներ ձեռք առնուլ՝ ամեն ինչ պարզելու և յանցաւորները պատասխանատուութեան ենթարկելու համար:

Բոս Արմենիա

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ
ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

(Շար. նախորդ թիւէն և վերջ)
Ռուսներէն եկած Դաշնակցական Պարսն մը ուղկով դէտողութիւններ ընել Պ. Հրահատ Կամարի բանախօսութեան մէկ քանի կետերուն, իմ ելաւ ու ի մէջ այլոց Ծանոթացաւ ըն-

կերպարակնութեան դէմ և քանի մը խօսքով ցոյց տուաւ թէ ընկերակցութիւնը չը համապատասխանի հայ ժողովուրդի պէտքերուն:

Պ. Հրահատ Կամար պատասխանել փորձեց այս դէտողութեան, ըսելով թէ Հայաստանի մէջ մարապաներու դասարար մը գոյութիւն ունենալէ զատ, արտասահմանի մէջ ալ հազարաւոր հայ բանւորներ կան, որոնց իրաւունքը գործարանատէր երու կամ գործատէրներու դէմ՝ պաշտպանել հարկ է, և յարկ թէ հայ ժողովուրդին մէջ ընկերակցութիւն քարոզելը որոշ չափով իր օգուտները ունի. բայց անոր փաստակարարութիւնը մենք չենք տեսներ:

Անոր այս խօսքին վրայ Թրաւուսի խմբակը դիտել տուաւ որ մեր ժողովուրդին մէջ Հին Հնչակեան կուսակցութեան ընդունած ձևով ընկերակցութիւն քարոզելու փաստները չատ ու չատ են և այդ փաստները կարող ենք փաստելով ցոյց տալ. հոս անոնցմէ միայն մէկը յիշեմ ըսաւ. «Ձեր անպայման ընկերակցական ըլլալն էր որ երկու Հնչակեան հաստատուններու մէջ կազմուած Միութիւնը քանդուցաւ»:

Պ. Հրահատ հարցուց. եթէ մեր ընկերակցական լինելը Միութեան արդեւ է, Վերակազմակերպը ու Դաշնակցականները չը միացնող պատճառը ի՞նչ է:

Պ. Գուրպէթեան պատասխանեց թէ Դաշնակցութեան ընդունած ապակեդրոնացման դրութիւնը չը զլխաւոր արդեւ ենք մինչ է նորը և Հնչակեանութեան միջեւ միութիւն չը կազմուելուն:

Պ. Հրահատ կրկին հարցուց. «չատ լաւ. Վերակազմակերպը և Միութեան անկախութիւնը միջեւ ծրագրային սարքերութիւն չկայ, ինչու ասոնք չեն միանար»: Անոր այս հարցումին ալ պատասխանեցաւ թէ Միութեան անկախութիւնները ծրագրած են բոլոր հայ յեղափ. կուսակցութիւնները միացնելու և յետոյ իրենք ալ կրկնապէս մէջ խառնուիլ. հետեւաբար առաջի չին կը նար անշատ մէկ կուսակցութեան հետ միանալ իր ասկաւին յուսահատած չին բոլորովին քաղկացեալ միութեան կազմուելուն:

Շարժումի խմբակը խօսել սկսելով «ընկերակցութիւնը հայ յեղափոխութեան նպատակարար չէ ըսաւ. այս պատճառաւ Դաշնակցութիւնը անոր այն տեղը չէ տուած ինչ տեղ որ տուած են Հին Հնչակեանները. չենք հերքեր որ ընկերակցական գաղափարը ապագային համար հայերու ալ օգտակար կրնայ ըլլալ. Գերմանիոյ և Ֆրանսոյի նման գրամատկները չեն որ Հայաստանի ժողովուրդը կը կեղեքեն այլ կառավարութիւնն է որ կը հարստանայ. հետեւաբար մենք պէտք չէ գաղափարային կոխ. մեր կոխը բռնակալ կառավարութեան դէմ պէտք է ըլլայ եւ այլ»:

Պ. Հրահատ պատասխանեց թէ քանի որ Դաշնակցութիւնը չափով ընդունել է ընկերակցութիւնը իր ծրագրին մէջ, կը նշանակէ թէ անոր օգտակարութիւնը ճանչցեր է. Այսօր կողմասի հազարաւոր հայ բանւորներու համար ընկերակցական գաղափարը բնորոշացած պահանջ է դարձած. Հնչակ. կուսակցութիւնը այդ պահանջին դիմացում պիտի տայ, միևնոյն ատեն կուսակցութիւնը հայաստանի մէջ թուրք բռնակալութեան դէմ:

Այս խնդրին վրայ 2-3 անգամ «Շարժումի» խմբակը և պ. Հրահատ ընդգրկման օտոնցին, ինամբ տանելով գլխար շոյիլու հակառակութիւնները պարակնելու գիտումով. Նյդ խմբակը իր դաշնակցական ընկերակցութեան դէմ իր դիրքին խօսքով ըլլաւ գիտնալով, զօրեղ կերպով չը կրցաւ պաշտպանել իր դէպը. բայց միևնոյն ատեն Հին Հնչակեաններու քարոզած և հետեւած ընկերակցական ուղղութիւնը անպատակարար և հայ յեղափոխութեան վնասակար ճանչցուեցաւ բոլոր ներկաներուն կողմէ: Բնմիջ վրայէն բանախօսողներու խօսքերը լմնալէ անմիջապէս յետոյ, պ. Գուրպէթեան օտոնց ելնելով երկու խոսք պիտի ընեմ ըսաւ ու սկսաւ խօսել այսպէս.

«Մենք ամենքս ալ, հաղել փոքր բացառութեամբ մը, Տաճկահայաստանցիներ ենք. մեր մէջէն ոչ ոք չը կըրնար Հայաստանի մէջ 10 ընտանիք յիշել որ իր սեփական հողը, տունը

կամ աղարակը չունենայ. Ամէնքս ալ գիտենք թէ իմէ հարստահարութիւնը գաղթի, ամէն հայ իր հողերու արդիւնքով երջանիկ կրնայ ապրիլ հոն. հետեւաբար ինչպէս պէտք չկայ մեր մէջ ընկերակցութիւն քարոզական ընելու, և հայ ժողովուրդը այդ պահանջը չը կրնար ունենալ քանի որ անոր պէտքը չունի. Անհրաքելի է թէ ամէն պահանջ պէտքի մը արդիւնքն է. Եւրոպայի ժողովուրդներուն մեծամասնութիւնը ունի այդ ընկերակցութեան պահանջը, որովհետեւ անոր պէտքը ունի, որովհետեւ այդ ժողովուրդներուն մեծագոյն մասը սեփականութիւններէ հողէ, տունէ զուրկ է և դատապարտուած է յաւիտեանով գործարանատիրոջ հաշտին աշխատելու միայն չոր հացի մը համար և չմէթօ տարածութեամբ սեփականութիւն մէջ 8-10 անձ պահելու «պաղք-սփիւն» նման. Այո, մենք Տաճկահայաստանցի Հայերս պէտք չունինք ընկերակցական և չենք ուզիր որ այդ օտարներէ կապկուած գաղափարը մեր մէջ բաժանուի մերու և դատապարտելու կողմէն կուսակցական պատճառ դառնայ. յոյսպէս չենք ուզիր որ այդ գաղափարն առաջնորդուած մարդիկ հայ յեղափոխութեան անունով ազդին արդէն անբաւական ուժերը բաժնին այսօր ռուս կառավարութեան դէմ, փաղը Պարսկին դէմ և միւս օր ուրիշ պետութեան մը դէմ կողմ կամ պատերազմ յայտարարելով. Մեր միակ նպատակը Տաճկահայաստանի փրկութիւնն է, ուստի մեր բոլոր ուժերը պէտք է ստոր եղբարակել ընելու հոն կեդրոնացնել»:

Արդէն մեկնելու պատրաստուած ժողովուրդը այդ խօսքերու տպաւորութեան տակ ցրուեցաւ. Եւ կարծենք թէ պ. Հրահատ Կամար լաւ համոզուեցաւ թէ իրենց քարոզած ընկերակցութիւնը հայ ժողովուրդը ընդունելու բնաւ արամադիր չէ: (*)

ՆԵՐՍԷՍ ՄԸ

[*] Մարդպետներ կոչուող փառաւոր լրբութիւնը ունեցաւ սուղիւրու ժողովուրդը զինքը վարձատրեց «էշ, չի՛ւշ, անկի՛րբ» և այլ մակդիրներով: ՆՈՅՆ

ՄԻՈՒԹԵԱՆ
ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Բ.

«Բրօշերը յանձնուած է տպագրութեան. արդարաւոր չէ հազար օրինակ. Աւետիսը գրում է. հազար օրինակի համար ծախք կը լինի 14-15 անգլիական սոկի և միւնչեւ չմարտի չենք կարող ստանալ բրօշերները. այսպէս օրինակ ընկերներ, դուք տեսնում էք որքան արդարացի կերպով սպասելի էր, որ դուք ձեր բաժին օգնութիւնը չըտատ փոխէ հասցնէիք կամ այստեղ կամ ուղղակի իրան, Աւետիսին, որի հասցէն նոյն նամակով ուղարկեցի ձեզ. ձեր, եթէ ուղղակի իրեն կուղարկէք, ուղարկած նպատակ մասին բացատրութիւն տուէք, թէ ի՞նչ նպատակով էք ուղարկում. մէկ անգլիական սոկի ևս եմ տալիս, եթէ վեց կամ եօթը սոկի էլ դուք հաւաքէք, այսպիսով կէսը մինք հոգացած կը լինինք, իսկ բրօշերները ուր որ ուղարկենք, ընկերներէ միջեւ թէ ընկերներէ դուք կը բաժնուին. փոխարէնը կամաւոր նուէրներ ընդունելով, օրը մի անասի հարգանքով կան ձեռք առնելով, բայց ոչ հանդամակցութեան անուն, հաւաքուած զրամով մի փոքր կը թիթեցուի Աւետիսը կրած նիւթական ներդրութիւնը, որով նոյնպէս միջոց կուտանք իրան նուիրուելու դրական աշխատութեան որ այն-

քան փափաքողն է, եթէ ստիպուած չլինի օրական չոր հացի համար ուրիշ գրադուս օրոնելու. Կովկասի ընկերները այդ կեղտոտ բրօշի բի հրատարակութիւնից յետոյ, ասանձին գուրդուբանք են տուած ու գէտի սրկեցեալ Աւետիսին, միւնչեւ անգամ փորձել են չան ստանալ անել թաղուն նպատակներով ջիւղուրակաւ միջոցի գիտող Հ. Ա. ին եթէ վերջինս գուրակելով իւր գլխին գաղթը փախուստ չիտար. Անպիտանը կարծել է, թէ դորանով վերջնապէս պիտի խորտակէ այն մարդին, որի ստուերից անգամ ստիպու են, չմտածելով որ գործած չարիքը մի՞ թարք է դառնալու նորան և իսկական չարիք իրան համար:

«Թե ինչ ծրագիր ունիմ տալ յայտն չենք գրել միւնչեւ որ մեր Ամերիկայի ներկայացուցիչը տեղը հասնէ. դուք նորան հետ կը խորհրդակցէք ձեր գործողութեան մասին, մեր անկախախտ ճեղք Ամերիկան է, որի համար մասնաւոր ջանքերով և վերջին ծայր խոհանութեամբ պէտք է գործել, մնացած կողմերին համար, օր. կովկասում, Գարախատանում իրերը լաւ երեւոյթ ունեն, մասնաւոր փառս ենք թէ կարող ենք լաւ ուղղութիւն տալ. Դուք մոեմութեամբ և անկողնութեամբ բացուեցէք պ. Սապահյէն և միևնոյն ժամանակ նրան առէք ձեր պաշտպանութեան տակ, որպէս Ռուսաստանցի իր պարզութեամբ կարող է էմբրիոնների զոհ դառնալ եթէ դուք ուղղութիւն չիտաք իրան. և միւս կողմից էլ զգուշութիւններ չենք ասնէք:

Աւետիսը պատրաստ օրին ուրիշ աշխատութիւններ, որի հրատարակութեան հողը նոյնպէս պիտի ծանրանայ ընկերների վրայ, այս բրօշերը տեսնե-

լուց յետոյ, կարծում ենք լաւ պիտի լինի լաժա-նորդները գանել և լաժանորդագրով հրատարակութեան տալ միւս աշխատութիւնները. յամենայն դէպս՝ այդ գեւ ապագայի գործ է, ներկայի համար մտածելու առաջով:

«Ամայս 14 ին, վաղը, շարաթ» օր, ճանապարհ կընկնին մեր ներկայացուցիչները, պ. Սապահյէնեան և մի ոմն պ. Բ. . . »

«Սիրելի ընկերներ աշխատեցէք տեղեւոյ գլխաւորապէս Վերակազմակ ընկերների հետ միասին կամ աւելի լաւ. և ուղղակի նրանց կողմից, մի ընկերական հարաբարով պահանջ ներկայացուի կենտրոնը, «Հնչակում» մեր Աւետիսին աշխատակցութեան համար. այդ մասին ուրիշ տեղեր էլ եմ գրել. . . երբ պահանջները զրակց կ'ստան, հարցը լաւ ընթացք կուտայ:

«Համարուէն եթէ փորձանք չպատահի, պր. Սապահյէն շարաթ օրը համար և թերեւս սոյն նամակիս հասնելուց առաջ իրարու հետ տեսնուէք:

«Հաղցէս կենտրոնի տան վրայ. այնտեղ էլ բնա-«կուսում եմ Աւետիսին» Մ Ս . . .

«Մնամ օրաւոր բարեկեցութիւն»

Ձերդ Հ. Սրբուսանեանց»
Այս բոլոր ստուերներէն դաւելն և երկմտութիւններէն յետոյ, Համարածուս Արդումանեանց, Սաղաթիլ Սաղումի և Ս. Տաշերեան կուսակցութեան բոլոր գործերը ուղղակի իրենց անձնական տրամադրութեան տակ պահելու խաղաղութեան կը դիմէին, յուսաւոր թէ այդպէսով պիտի յաջողին դուցէ իրենց բոլոր մեքենայութիւնները դիւրացնել:

1902 յունիս 3 ին, կեկրոն. վարչութեան երկ-

ԵՂԲԱՅՐԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՏԻՈՒՐ ԱՍՊԵՏՆԵՐ

Վերջերս տեղի ունեցած մեր աղագային տխուր դեպքերը, որոնք եկան ձմեռային ամեն անկողն հայու սրտեր եւ այդ առթիւ արագաշարժուած ժողովուրդին արգասի դայրոյթը պահ մը կարծել տուին մեզ թէ, դո՛ւնէ ասկէ վերջ, պիտի զլուստանան պիտի խղճահարին մեր կուսակցութիւններն ընդհանրապէս իրենց հաւատարմութիւնը մեր հայրենիքի հանդէպ մը անարժան վարկէններ. ստոնք առ երես կարծես ուրիշներէ աւելի ցաւակցութիւն յայտնել կուզէին, այդ տխուր դեպքերու առթիւ. բայց զգալիորէն աշար ցուօք որով հաւատարմութիւնն է որ այդ պարտնէրը երբեք մարդ մը չափ չեն շնորհ իրենց ընդդէմը հինաւուրց եղբայրասպան դուրսնելն եւ չեն զգաւորացած այդ տխուր դեպքերէն ու զգաւորանալիք ալ չունին: Անոնք ամենամոլորական կերպով ճիշդ շարունակեն ինքնազոյն որ եղբայրասպանութիւններ ինքնուրեւ ու շարունակուելու ինչ պարտնէրէն, պ. Հրահատ Կաթար Հին Հնչակեան կեդրոնի ներկայացուցիչ եւ անդամ լրատ Կարգպետներին ինչպէս չափ մը տեղի ունիպէս հոս Վառնա, իր բանախօսութեան մէջ յայտարարեց թէ իրենք դէմ էին եղբայրասպանութեան եւ դէմ են. ու այսուհետեւ ա'լ բնաւ չպիտի ընեն

Անցեալ օր գործով մը Դաշնակցականներու ԲԱԲԿԵՆ-ՍԻՒՆԻ ընթերցարանէն ներս մտայ, ուր խոնուած կային բաւական թուով պատմութիւններ ու քանի մը հասակաւոր մարդիկ, հոն կային նաեւ համալսարանի Սագունի-Արզումանեան կենտրոնի ներկայացուցիչ-անդամ Հրահատ Կաթար եւ իր ընկերներն ու Դաշնակցականներէ Մարգարտունի եւ ուրիշներն որոնց ի տես հետաքրքրուեցայ ու նըստայ:

Հոն բազմակի եղաւ Մարգարտունի որ ելլէ քիչ մը ասանախօսէ. Մարգարտունին ելաւ խօսելու, նա այս անգամ ալ, ինչպէս ամէն անգամ, նիւթ անհետիւթ թէ ինչպէ՞ս Հոգիմը իր

դռնիւր բացաւ Կեւարու զօրութեան առաջ, եւ իր խօսքը ուղղելով մասնաւորապէս այդ պատմութիւններուն ըսաւ. «մենք յեղափոխականներն պէտք է կուսինք մեր ներքին ու արտաքին թշնամիներուն դէմ. մէկ ձեռքով դաշտնը պէտք է միանք թուրքին կուրծքը իսկ միւսով ոչնչացնենք մեր հակադաւադիրական տարրը. արդէն մենք երկու կուսակցութիւններն զոյգութիւն ունինք, Դաշնակցութիւնն եւ Հնչակեանութիւնը. պէտք է մենք ձեռք ձեռքի առնենք ու պարտնէնք տակ ճգմանք հակադաւադիրականներն եւ սլինք. ու նստաւ ծափահարութեանց մէջ:

Մարգարտունին յաջորդեց Պ. Հրահատ Կաթար. որը նոյն բանը կրկնեց ու միեւնոյն թեւաբանութիւնը ըրաւ հակադաւադիրականներուն դէմ. ու ես զարմացած կը դիտէի, եւ կըսէի մտքովս, արդէ՞ օր ո՞րք էին հակադաւադիրական տարրերը «Եւրոպայի» մէջ կարգադիր Մարգարտունիի յօդուածը, որին մէջ յակնդէմ անուանէ Վերականգնող կուսակցութիւնը կը մատնանէ իբր Հակադաւադիրական տարրը:

Մըդ, ինչպէս բացատրենք, այս ապուշ եւ զգուշիկ հակադաւադիրն ու այլադաւադիրները. հակադաւադիրն, որովհետեւ դեռ երկէ կը որ թէ հին Հնչակեանն եւ թէ Դաշնակցական կուսակցութիւնները՝ որոնց կը պատկանին այդ երկու տարրերէն Պարտնէրն, կը բանակցէին Վեր. Հնչակեան կուսակցութեան հետ միասնաբար նպատակաւ. իսկ այսօր չեն ամենար անոր գոյութիւնը ու բանալի եւ դոյն «հակադաւադիրական» ներկայացնել:

Այլադաւադիրները, որովհետեւ երբ մէկ կողմէն կը զատապարտեն եղբայրասպանութիւնը միւս կողմէ մասնաւոր անկրօններու մէջ անմեղ սրտեր թուանաւորելով կը թելադրեն զանոնք դաշտն առնել եւ վեր. Հնչակեաններն սպաննել:

Ըրթեցող հասարակութեան առողջ դատողութեան կը լանչարարենք այս պարտնէրուն եղբայրասպան ընթացքը:

ՄՈՒՇԵՆ, Յ. ՍԵՐԷՆՍՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Ա Ռ

Մ Ռ Ր Չ Պ Ե Տ Ո Ւ Ն Ի

— 3 —

Հինգշաբթի օրուան բանախօսութեան առթիւ ձեր նախաջողութեան կարգադիր «Եւրոպայի» մէջ: Ձեր ըրած խեղաթիւրուածները եւ սքողումները մեզ զարմանք չեն պատճառել, կարծեմանակ մը մէջ լաւ ճանչցած ըլլալով ձեր խանդավառութեան Պոլսոյ մեծ ցոյցերը, Սասնոյ ու Զէյթունի ապստամբութիւնները կազմակերպող ու առաջնորդող հայրենասէրներէ գլխաւորապէս կարծուած վերակազմ: Հնչակեան կուսակցութիւնը հակադաւադիրական կոչելու ալ չը պիտի զիջանքս պատասխանել:

Միայն կուգամ այս նախախօս ձեզ հարցնել թէ՛ չէ՞ ամենար դուք որ հարկաւոր անձերու ներկայութեան ձեր գործած լրատւութիւնը ժողովուրդին կը վերագրէք, ըսելով թէ ժողովրդի ցրուելու առնել «Իրաւունք» խմբագրին խօսած խօսքերը սուրբնորով վարձատրուեցան: Լի՛ր, դուն եւ միայն դուն էիր որ այդ միջոցին վարագործը ինքնուրեւ սուրբ սկսար, եւ այդ լրատւութեան արժանի վարձը գտար, ժողովուրդին բարձրագոյն, «էջ, սրիկայ» չի՛ւն եւ անկիրթ» անկաններուն արժանաւարով:

Եւ դեռ չես ամենար այսքան յայտնի իրողութիւնն ալ խեղաթիւրելու:

Սյո աստիճան անամօթ լիբը մը ըլլալով, իբր դատախազի փոքրիկ տղայաց ալ սա խրատը կուտաք եղեր. «Դուք պէտք է յեղափոխականներ ըլլաք. պէտք է երկու սուր ունենաք մէկը թուրքին իսկ միւսը հակադաւադիրականներուն կուրծքը մխելու» եւ հրապարակաւ չէք քաշուիր ըսելու որ այդ հակադաւադիրականները վեր. Հնչակեաններն են: Այս կերպով վարձատրի փոքրիկներուն ալ ուղղակի եղբայրասպանութիւն կը քարոզէք ու չէք իրզնահարկութեամբ, վա՛ւ, վա՛ւ, վա՛ւ եղբայրասպան:

Իհա կիւն անձաք ալ կը տեսնուինք:

ՍՄԲԱՏ-ՀԲԱՏ

ԱԶԳԱՅԻՆ

Քանի մը օր առաջ Պուլկար հեռագրական գործակալութեան Պոլսէն տեղեկութիւն տրուած էր թէ Ռ. Դուռը կը մերժէ անցագիր տալ Պուլկարիոյ Առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոսին: Նորին Սրբաշնութիւնը աւելի տառաջ լիացուցած էր որ իր պաշտօնական թուղթերուն ելլելուն կը սպասէ որ Պոլսէն Պուլկարիա վեկին: Այժմ անոր յապաղումին պատճառը կը բացատրուի Դուռն յարուցած այդ արգելքով:

ԵՐՈՒՅԱՂԷՄԷՆ Տ. Մամբրէ եւ Ներսէս եպիսկոպոսներէ ինչպէս նաեւ ուրիշ միաբաններէ ստորագրուած գիր մը ուղղուած է Պատրիարքին, որով վանքին վիճակին վրայ տեղեկութիւններ տալով, կեդր. Վարչութեան կարգադրութիւնը ու անմիջական տնօրինութիւնը խնդրած են:

Սառնանդակ կըսէ թէ Խաւն Ժողովն արդէն հարկ եղած քննութիւնները որոշած ըլլալով Ս. Պատրիարքը այս օրերս քննիչներու ուղեւորութեան մասին պէտք եղած հրամանը պիտի խնդրէ եւ հարկաւոր կարգադրութիւնները պիտի ընէ: Իսկ միւս կողմէ հեռագիրները հաղորդած էին թէ Դուռը կը մերժէ Երուզէմի քննիչներուն մեկնումը արտօնել:

Մեր ստացած մասնաւոր տեղեկութեանց նայելով, Օրմանեան Պատրիարք Դուռէն մերժում ստանալէ յետոյ դիմած է Երւստղ եւ, բայց ցարդ չէ՛ յաջորած զահագուցիչ պատասխան մը ստանալ: Պոլսոյ Պատրիարք

բորդ նիստին մէջ իսկ. Բրտուեցաւ կուսակցութեան համար բոլորովին նոր տուն մը վարձել եւ հոն փոխադրել երկու կողմի գոյքերը:

Տուն վարձելու աշխատանքն ստանձնեցին Սաղաթիւ Սաղունի եւ Կարապետ Մարտիրոսի (տես արձանա. երես 2. ստորագրուած ամենքէն): Տան համար այս կարգադրութիւնն ընել անհրաժեշտ էր, որպէսզի տանտէրը երկու կողմէն հաւասար մարդիկ ճանչնայ իբր վարձակալ:

«Բէքնամ Բիւն» 85 թիւ տունը մասնաւոր վերջնապէս փոխել որոշուեցաւ, այն միակ պատճառով որ քանի մը տարիէ իվեր միմիայն հին հասուածի մարդիկը ճանչցուած են տան տիրոջ մօտ եւ հետեւաբար երկրին օրէնքով միմիայն իրենք սեփականատէր կը ճանչցուին տան մէջ՝ գտնուած բոլոր գոյքերուն, միջոցներ ինչպէս «Հնչակ»ը նոյնպէս եւ կուսակցութեան բոլոր գոյքերը պէտք է գտնուէին երկու կողմէն հաւասար թուով մարդոց իրաւասութեան տակ:

Սաղաթիւ, Արզումանեանց եւ Տաշեքեան խմբակը սակայն, իր մեքենայութեանց մէջ ա'լ աւելի առաջ երթալով զանազան խարդախ ու անհեղինակ միջոցներով, յայտնապէս սկսաւ ամէն ճիգ թափել՝ կուսակցութեան գոյքերն ուղղակի իր անձնական ու անմիջական տրամադրութեան տակ առնելու համար:

Այսպէս, տեսնելով որ կեդր. վարչութեան մէջ մեր իրաւունքներն ալ կը շարունակեն յայտնապէս բռնաբարութիւն տեսնելով որ մեր առջեւ փակ կը մնայ կեդր. վարչութեան պաշտօնավարը, տեսնելով, հաւատարմութիւն մասնաւոր որ պարտնայք Համ-

բարձում Մեղր մասնաւոր, Սաղունի Սաղաթիւ եւ Տ. Տաշեքեան՝ կուսակցութեան գոյքերը իրենց ուղղակի եւ անձնական տրամադրութեան տակ պահելու համար խարդախ միջոցներու կը դիմեն, հետեւեալ խորհրդակցելով զրկեցինք:

«Հնչ. կուսակցութեան կեդր. վարչութեան անգամ պ. պ. Համբարձում Արզումանեանց, Սաղունի Սաղաթիւ, եւ Ս. Տաշեքեան»:

«Պր. Համբարձում Արզումանեանց՝ Հնչակեան կուսակցութեան 85 թիւ տան մէջ բնակելու համար իբր վայելած թոյլտուութիւնը այսօր չարաչար կը «գործածէ»:

«Պր. Համբարձում Արզումանեանց իր անձնական սեփականութեան պէս կը վարուի կուսակցութեան բոլոր գոյքերուն հետ՝ որոնք կը գտնուին «միեւնոյն տան մէջ»:

«Պր. Համբարձում Արզումանեանց՝ կուսակցութեան պաշտօնավարը, որ նոյնպէս կը գտնուի «Պր. Սաղաթիւ»-ի փակէ մեր՝ այսինքն, «Հնչ. վարչութեան երեք անգամներու» առջեւ:

«Ամսոյս 14 ին, երբ պ. Զիթեանն ալ միասին ըլլալով ժողովի եկանք պաշտօնավարը, կուսակցութեան տունը, պ. Համբարձում չուղից բանալ «գուռը, ու երբ մենք մեր անկողնիցի ու ամենաէական իրաւունքներուն անուշովը պահանջեցինք «կեդրոնավարին դուռը մեր առջեւ բանալ, սպառնալին ու խելացի ձեւերով եւ պոռնութեանքով, «սանդուղիներէն վեր, իր սենեակը վազել, զենքով մը վերադառնալու երկուսով»:

«Ասկէ դուռ, դարձաւ դուռ, երեքդ, գոցած էք 85 թիւ տան տիրոջ մօտ, ու անոր ներկայա-

ցուցած էք ձեր մէջէն պր. Սաղունին, իբրեւ նոյն «ինքն «Մ. Պէլլաք», անուն մը, զոր կեդր. վարչութեան անդամներէն ոչ ոք իրաւունք չունի իւրացնելու»:

«Այս պարագաները պարտականութիւն կը դրանք մեր վրայ մտածելու, թէ դուք ո՛չ միայն չաւրաջար գործածած էք մեր ընկերական վստահութիւնը, այլ եւ՝ ինչպէս իրողութիւններն անվիճելի «լիբըն մեզ կը համոզեն՝ դուք կուսակցութեան գոյքերն ու տունը անձնական սեփականութեան պէս կը նկատէք. եւ ուրեմն՝ այդ գոյքերը կուսակցութեան շահերուն պահանջած ապահովութեան մէջ չեն գտնուիր եւ ենթակայ են անհատական կամայականութիւններու եւ քմահաճոյքներու»:

«Իրաց այս վիճակին մէջ կը պահանջենք որ

1. «Պր. Համբարձում Արզումանեան անմիջապէս կուսակցութեան տունէն դուրս ելլէ ընտանեօք եւ «տաշեքեան ու կուսակցութեան յոյժ գոյքերը «հաշտաւարապէս քի՛ մեր եւ քի՛՝ ձեր տրաւաւադրութեան տակ դրուին»:

2. Եթէ պր. Համբարձում Արզումանեան նկատուեալ ունի կուսակցութեան տունը բնակելու՝ «հակառակ մեր հաւանութեան, անմիջապէս նոր «տեղ մը վարձուի՝ ուր փոխադրուին կուսակցութեան բոլոր գոյքերը եւ ուր՝ մենք ու դուք՝ «հաւասար իրաւունքներով ճանչցուինք, եւ որուն դրութեանը չկարենան զոց միալ ո՛չ մեր, ո՛չ ալ ձեր «առջեւ»:

(Հարունակելի)

